1828 Թ. «ՌՈՒՍ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ» ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ

ՍԻՄՈՆՅԱՆ Վ. Ռ.

Դեռ 1823 թ. հոկտեմբերի 8-ին Բեգիչևների կալվածքում ռուս գրող և դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովը[1] ընկերոջը՝ Ա. Վ. Վսեվոլոժսկուն, խնդրում է իրեն տեղեկություններ հաղորդել նիժեգորոդյան տոնավաճառից՝ պարսիկների հետ ապրանքների ներմուծման և արտահանման պահանջարկներն իմանալու համար[2]: Հավանաբար, դա եղել է Ա. Երմոլովի հանձնարարականը, քանի որ Կովկասի «պրոկոնսուլը» շատ էր հետաքրքրվում Անդրկովկասի տնտեսական զարգացմամբ, զբաղվում էր մետաքսագործության, շերամապահության հարցերով, ձգտում էր նավարկելի դարձնել Քուռը: 1827 թ. ապրիլի 16-ին Ֆ. Բուլգարինին հղած նամակով Ա. Գրիբոյեդովը նրանից խնդրում էր իրեն ուղարկել եվրոպական զարգացած երկրներից մեկի որևէ մարզի մանրակրկիտ վիճակագրական, տնտեսական աղյուսակները՝ դրանց նմանությամբ Անդրկովկասի բարեկարգման համար աղյուսակներ ստեղծելու համար[3]: Այս առթիվ է նաև նրա պատրաստած «Թիֆլիս քաղաքը կրկին կառուցելու լավագույն ձևերի մասին գրությունը»[4]:

Վ. Պարսամյանը գրում է, որ Ա. Գրիբոյեդովի նախաձեռնությամբ Ռուսաստանի մի շարք նախարարություններից Անդրկովկաս են գործուղվել մասնագետներ Շոպենը, Գրիգորևը, Զուբարևը, Զավիլեյսկին և այլք, որոնք լուրջ հետազոտություններ են կատարել և արդյունքները տրամադրել Ա. Գրիբոյեդովին[5]:

Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հայացքների և Անդրկովկասում տնտեսական գործունեության բարձրակետը համարվում է նրա և վրացական պետական ֆինանսական հիմնարկաբաժնի (էքսպեդիցիայի) պետ Պ. Զավիլեյսկու կազմած «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծը»(”Проект учреждения Российской-Закавказской

---

[1] Ա. Գրիբոյեդովի հասարակական, դիվանագիտական գործունեության մասին մանրամասն տե՛ս **Սիմոնյան Վ.,** Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում Ա. Ս. Գրիբոյեդովի մասնակցության հարցը խորհրդային պատմագրության գնահատմամբ (Պատմա-բանասիրական հանդես, Ե., 2005, N 3, էջ 103-110), **նույնի՝** Ա. Ս. Գրիբոյեդովի հարաբերությունները Ա. Պ. Երմոլովի և Ի. Ֆ. Պասկևիչի հետ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ մինչխորհրդային ռուս պատմագրության գնահատմամբ (Կանթեղ, 2006, N 1, էջ 209-220), **նույնի՝** Ա. Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ և դրանց շրջանցումը խորհրդային պատմագրության կողմից (Կանթեղ, 2006, N 4, էջ 182-192):

[2] **Грибоедов А. С.**, *Сочинения в 2-х томах, т. 2, М., 1971, с. 220-221.*

[3] Նույն տեղում, էջ 271:

[4] **Нечкина М. В.,** *Грибоедов и декабристы, М., 1951, с. 537,* տե՛ս նաև **Грибоедов А. С.,** նշվ. աշխ., էջ 86-87:

[5] **Պարսամյան Վ. Ա.,** Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1947, էջ 158-159:

компании"):Այն բաղկացած էր երեք մասից.1)«Ռուս-անդրկովկասյան ընկերության կանոնադրության նախագծի ներածություն», 2) «Ռուս-անդրկովկասյան ընկերության կանոնադրություն»,3)«Ռուս-անդրկովկասյան ընկերություն հիմնելու մասին գրություն»:

Այս երեքից մեզ են հասել առաջինը և երրորդը: «Նախագծի ներածությունը» առաջին անգամ հրատարակվել է "Тифлисские ведомости" թերթում՝ 1831 թ.[6], «Գրությունը» 1891 թ. հրապարակել է Ա. Մալշինսկին[7]: «Ընկերության կանոնադրության» տեքստի բնօրինակի փոխարեն մեզ են հասել միայն մեկնաբանություններով և դիտողություններով ոչ ամբողջական տարբերակները:

Անդրադառնանք «Նախագծի» ստեղծման գործում Ի. Պասկևիչի և Պ. Զավիլեյսկու մասնակցության չափի, «Նախագծի» մերժումից հետոՊ. Զավիլեյսկու հետագա գործունեության, ինչպես նաև «Նախագծի»վերաբերյալ Ի. Բուրցովին և Մ. Ժուկովսկուն վերագրվող կարծիքների և դիտողությունների շուրջ խորհրդային պատմագրության մոտեցումներին:

I. Վիճահարույց է «Ընկերության նախագծի» ստեղծման տեղի հարցը: Ա. Գրիբոյեդովի ժամանակակից Ն. Մուրավյով-Կարսկին նշում է, որ այն ստեղծվել է Սանկտ-Պետերբուրգում, երբ Ա. Գրիբոյեդովը կայսրին է տարել Թուրքմենչայի պայմանագիրը[8]:Նա «Ընկերության» կառավարման և արդյունաբերության ոլորտները նույնացնում է անգլիական «Օստ-հինդկական (Արևելա-հնդկական - Ս. Վ.) ընկերության» արտոնությունների հետ: «Նախագիծը» Պետերբուրգում ստեղծված լինելու մասին սա միակ վկայությունն է:

Հնչելով հիշատակության աղբյուրը՝ակադեմիկոս Մ. Նեչկինան վկայակոչում է «Նախագծի ներածությունը» 1828 թ. հուլիսի 17-ին Թիֆլիսում գրված լինելու մասին Ե. Վեյդենբաումի պնդումը[9]: Ինչ վերաբերում է «Ընկերություն հիմնելու մասին գրությանը», ապա այն նույնպես ստորագրված է Թիֆլիսում՝ 1828 թ. սեպտեմբերի 7-ին[10]: Ենթադրում ենք, որ բանավոր զրույցներն ու տեսակետների ճշտումը տեղի է ունեցել Սանկտ-Պետերբուրգում, իսկ «Կանոնադրությունը», դրան կից «Գրությունը» և «Ներածությունը»գրվել են Թիֆլիսում:

II. Անտեսելով և միակողմանի մեկնաբանելով «Նախագծի» շուրջ Ի. Պասկևիչին ուղղված՝ Ա. Գրիբոյեդովի նամակը (որտեղ վերջինս Ի. Պասկևիչին հիշեցնում էր Կովկասի բարեկարգման և նոր կառույցներ

---

[6] **Маркова О. П.,** *Новые материалы о Проекте Российско-Закавказской компании А. С. Грибоедова и П. Д. Завелейского (Исторический архив, т. VI, М., 1951, с. 325* (մնացած հեղինակները գրում են Զավիլեյսկի ձևով):

[7] **Мальшинский А. П.,** *Неизданная записка А. С. Грибоедова (Русский вестник, т. 216, сентябрь, СПб., 1891, с. 5-11).*

[8] *А. С. Грибоедов, его жизнь и гибель в мемуарах современников, ред. и примеч. Зин. Давыдова, Л., 1929, с. 135.*

[9] **Нечкина М. В.,** նշվ. աշխ., էջ 538:

[10] **Мальшинский А. П.,** նշվ. աշխ., էջ 11:

հիմնելու վերաբերյալ նրա հանձնարարականների և «օգտակար գաղափարները թռուցիկ կերպով թղթին հանձնելու» մասին)[11], խորհրդային պատմագրությունը փորձում է նվազագույնի հասցնել Ի. Պասկևիչի կատարած դերը: Ի. Ենիկոլոպովը «Նախագծի» այդ տողերը Ի. Պասկևիչի զգուշավորությունը բթացնելու նպատակ հետապնդող մարտավարական քայլ է համարում[12]: Ի. Ենիկոլոպովի տեսակետին չէ Օ. Մարկովան, որը կարծում է, որ Անդրկովկասի կառավարումը բազմակողմանիորեն բարեփոխելու մասին պլանը հղացել է Ի. Պասկևիչը, որն էլ հույս էր ներշնչում «Նախագծի» հեղինակներին[13]: Միաժամանակ, Օ. Մարկովան նշում է նաև հեղինակների և Ի. Պասկևիչի նպատակների տարբերությունը: Անշուշտ, «Նախագծի» կազմման գործում Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին հաշվի էին առել Անդրկովկասը բարեփոխելու՝ Ի. Պասկևիչի մտքերը: Կարծում ենք, որ այս հարցում Ի. Պասկևիչի՝ եթե ոչ անմիջական, ապա գաղափարական մասնակցությունն անհերքելի է:

III. Վիճահարույց է նաև «Ընկերության նախագծի» ստեղծման գործում Պ. Զավիլեյսկու մասնակցության չափի հարցը: Պատճառը դարձյալ Ն. Մուրավյով-Կարսկու վկայությունն է, ըստ որի՝ «Նախագիծը» գրել է Պ. Զավիլեյսկին՝ Ա. Գրիբոյեդովի թելադրանքով[14]: Պ. Զավիլեյսկուն հատկացվել է ընդամենը «գրագրի» դեր: Ըստ խորհրդային գրիբոյեդովագետների՝ այդ դերն ավելին է եղել, սակայն նրանք, հաճախ հակասելով իրենց պնդումներին, ակամա ընդլայնում են Պ. Զավիլեյսկու գործունեության չափը: Ի. Ենիկոլոպովը վկայում է, որ որպես փորձված ֆինանսիստ՝ Պ. Զավիլեյսկին է գրել «Ընկերության կանոնադրության» ենթագլուխների մեծ մասը, միաժամանակ պնդում է, որ «Նախագծի» ստեղծման գաղափարն ամբողջությամբ պատկանում է Ա. Գրիբոյեդովին[15] ու չի նշում, թե կոնկրետ որ մասն է գրել Ա. Գրիբոյեդովը:

Ն. Մուրավյով-Կարսկու կողմից Պ. Զավիլեյսկու դերը թերագնահատված համարելով, միաժամանակ նշելով վերջինիս՝ ֆինանսիստ, մաքսային գործի գիտակ և տնտեսական հարցերով հետաքրքրվող լինելը՝ Պ. Զավիլեյսկու դերը, այնուամենայնիվ, «երկրորդական» է համարում նաև Օ. Մարկովան[16]: «Նախագծի» տակ Ա. Գրիբոյեդովի ստորագրության կողքին դրված՝ Պ. Զավիլեյսկու ստորագրության մասին խոսելիս ակամայից նրանց համահեղինակ լինելու մասին է փաստում Օ. Պոպովան, բայց անմիջապես շտապում է ավելացնել, որ չի կարելի կասկածել «Նախագծի» մտահղացման և առյուծի բաժինը Գրիբոյեդովին պատկանելուն[17]: Այսքանով հանդերձ՝ նա չի նշում որևէ փաստ, ըստ որի, չի կարելի կասկածել դրան: Նա շրջանցում է Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու՝ համահեղինակ լինելու հանգամանքը:

---

[11] **Грибоедов А. С.,** նշվ. աշխ., էջ 91:
[12] **Ениколопов И.,** *Грибоедов и Восток, Е., 1954, с. 158.*
[13] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 158:
[14] *А. С. Грибоедов, его жизнь и гибель..., с. 135.*
[15] **Ениколопов И. К.,** նշվ. աշխ., էջ 145.
[16] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 339-340:
[17] **Попова О. И.,** *Грибоедов – дипломат, М., 1964, с. 118.*

Մենք համամիտ ենք Ն. Մուրավյով-Կարսկու կողմից Պ. Զավիլեյսկու դերի թերագնահատման հարցում խորհրդային պատմագրության տեսակետներին, սակայն միևնույն ժամանակ կարծում ենք, որ նրա դերը շատ ավելին է եղել նաև խորհրդային պատմաբանների նշած չափից. դրա վկայությունը Ա. Գրիբոյեդովի՝ Պարսկաստան մեկնելուց հետո «Նախագիծը» կյանքի կոչելու համար Պ. Զավիլեյսկու թափած ջանքերն էին և Ա. Գրիբոյեդովի դրսևորած հետագա անտարբերությունը[18]:

Պ. Զավիլեյսկու դերը «երկրորդական» համարող Օ. Մարկովան նույն աշխատության մեջ վկայում է, որ ֆինանսների նախարար կոմս Կանկրինին Պ. Զավիլեյսկու ներկայացրած միջնորդագրի և թափած ջանքերի շնորհիվ Բորժոմի կիրճում հիմնվել է գործարան. «Այսպիսով՝ Վրաստանում այդ առաջին բաժնետիրական ձեռնարկությունը կապված է Պ. Դ. Զավիլեյսկու անվան հետ...»[19]:

Դուշեթի մարզում 5 հազար դեսյատին հողի վրա բամբակ, զաֆրան, տորոն, խաղող և թութ աճեցնելու նպատակով Պ. Զավիլեյսկու և Չիլանի (Չիլաձե, որը Ա. Գրիբոյեդովի ընկերն էր) ջանադրության մասին է վկայում նաև Ի. Ենիկոլոպովը[20]: Ինչպես Ա. Մալշինսկին[21], այնպես էլ հետագայում Ի. Ենիկոլոպովը վկայում են[22], որ միայն Ի. Պասկևիչին փոխարինած բարոն Ռոզենի ժամանակ հսկայական «Ռուս-անդրկովկասյան ընկերությունը» վերածվեց համեստ առևտրամիջնորդական մի հաստատության՝ «Անդրկովկասյան առևտրային դեպո»ֆիրմայի: Վերջիններիս տեսակետներին հակադրվելով՝ Օ. Մարկովան համոզված է, որ Պ. Զավիլեյսկու «Կազմակերպությունը» (депо -ն) չպետք է ընդհանրացնել «Ռուս-անդրկովկասյան ընկերության»հետ, քանզի տարբեր էին նրանց նպատակները և բնույթը: Նա համոզված էր, որ «դեպոն» առևտրային էր և երկրամասի արտադրողական ուժերի զարգացմամբ չէր հետաքրքրվում[23]: Օ. Մարկովայի այս կարծիքը համոզիչ չէ, քանզի վերոհիշյալ «դեպոյի» նպատակների ու բնույթի մասին ոչ մի հեղինակ մանրամասն չի գրել: Երկու կազմակերպությունների ընդգրկումներն անհամեմատելի են, սակայն երկուսի մոտ էլ առևտրային դրույթները համահունչ են: «Ընկերության» կանոնադրության տեքստը մեզ է հասել ոչ միայն ոչ ամբողջական տեսքով, այլև ուրիշների մեկնաբանություններով և դիտողություններով:

IV. «Նախագծի» մասին կարծիք գրելու համար Ի. Պասկևիչն այն հանձնել է Կովկաս աքսորված դեկաբրիստ, գնդապետ Ի. Բուրցովին և

---

[18] *А. С. Грибоедов, его жизнь и гибель..., с. 136* (տե՛ս Ն. Ն. Մուրավյով-Կարսկու հուշերը):

[19] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 341-342:

[20] **Ениколопов И. К.,** նշվ. աշխ., էջ 159:

[21] **Мальшинский А. П.,** նշվ. աշխ., էջ 17:

[22] **Ениколопов И. К.,** *А. С. Грибоедов в Грузии и в Персии. Историко – биографический очерк, Тифлис, 1929, с. 61* (Ի. Ենիկոլոպովը Ա. Մալշինսկու նշած *“депо”*-ն ներկայացնում է *“дело”* ձևով):

[23] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 342:

գեներալ-համբարակ Մ. Ժուկովսկուն: Ժամանակակիցների վկայությամբ, Ի. Բուրցովը խելացի, կրթված և օժտված անձնավորություն էր[24]:

1827 թ. ապրիլին գեներալ-համբարակի կոչումով Կովկաս ժամանած Մ. Ս. Ժուկովսկուն խորհրդային պատմագրությունը ներկայացնում է որպես «հետադիմական, ճորտատիրական կարգերի ջատագով», միևնույն ժամանակ՝ «խելացի և այլոց մտքերն իր սեփականի տեղ հրամցնելու անընդունակ», տեսականորեն լավ զինված հակառակորդ[25]:

Չնշելով ոչ մի արխիվ և աղբյուր (թե որտեղից է հայտնաբերել Ի. Բուրցովի մեկնաբանություններով «Գրությունն»ու «Կանոնադրության» տեքստը)՝ դրանք 1891 թ. "Русский Вестник" -ում հատվածաբար հրատարակել է Ա. Մալշինսկին[26]: Այս առումով Օ. Մարկովան անապացույց պնդում է, որ Ա. Գրիբոյեդովի «Գրությունը» Ա. Մալշինսկուն է անցել, իբր, իշխան Ա. Շչերբատովից, որին նա օգնում էր Ի. Պասկևիչի կենսագրությունը կազմելիս[27]:

Օ. Մարկովան է առաջին անգամ ամբողջությամբ հրապարակել է Մ. Ժուկովսկու դիտողություններով տեքստը, որը նա ուղարկել էր Ի. Պասկևիչին փոխարինած բարոն Գ. Ռոզենին:Սա երևում է 1833 թ. հունվարի 26-ին Մ. Ժուկովսկու նամակից[28]:Համեմատելով իր հայտնաբերածը Ա. Մալշինսկու հրապարակածի հետ՝ Օ. Մարկովան նշում է Ի. Բուրցովի և Ի. Պասկևիչի կարծիքների «տեքստային լիակատար համընկնումը Մ. Ժուկովսկու կարծիքի հետ՝ կապված թե՛ արտոնությունների, թե՛ այլ հարցերի հետ»[29]: Ա. Մալշինսկին ներկայացնում է ոչ միայն Ի. Բուրցովի, այլև Ի. Պասկևիչի արած դիտողությունները, որոնց իսկությանը Օ. Մարկովան չի կասկածում: Նա եզրակացնում է, որ Ա. Մալշինսկու մեկնաբանությունները ոչ թե Ի. Բուրցովինն են, այլ՝ Մ. Ժուկովսկունը, և որ Ա. Մալշինսկուն թյուրիմացության մեջ է գցել այն, որ նա չի ունեցել Մ. Ժուկովսկու «Գրության» բնօրինակը[30]:

Ա. Մալշինսկու տրամադրության տակ է եղել Մ. Ժուկովսկու դիտողություններով փաստաթղթի ոչ ամբողջական տեքստը, որտեղ Ի. Բուրցովի անունը հիշատակվում է որպես մի մարդու, որին հանձնարարվել է կարծիք գրել հիմնադրվող «Ընկերության նախագծի» մասին:Ի. Պասկևիչի կողմից Ի. Բուրցովին «Կարծիք» գրել տալու հանգամանքը Օ. Մարկովան փորձում է բացատրել նրանով, որ Ի. Պասկևիչը ծայրահեղ դեպքում էր դիմում կասկածելի, տվյալ պարագայում՝«խռովարար դեկաբրիստ» մարդկանց օգնությանը, մյուս կողմից՝ նրան այդ հանձնարարականից հեռու կպահեր Ի. Բուրցովի մտերմությունը Ի. Պասկևիչի հակառակորդ և ատելի Ն. Միայագինի հետ (վերջինս Վրաստանի ռազմական նահանգապետն էր):Դա թույլ է տալիս, որ Օ. Մարկովան կատարի հետագայում ոչ մեկի կողմից չպաշտպանված «հանճարեղ» մի եզրակացություն.«....Ան-

---

[24] **Ениколопов И.**, *Грибоедов и Восток, с. 151.*

[25] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 330:

[26] **Малышинский А. П.,** նշվ. աշխ., էջ 11-17:

[27] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 330:

[28] Նույն տեղում, էջ 326:

[29] Նույն տեղում, էջ 327-328:

[30] Նույն տեղում, էջ 328:

կախ մեզանից՝ ստեղծվում է այն ենթադրությունը, որ հեղինակները (Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին - Վ. Ս.) իրենք էին Ի. Բուրցովին առաջարկել կարծիք հայտնել իրենց «Նախագծի» մասին...»[31]: Ի. Բուրցովի պատրաստած տեքստի բնօրինակը մեզ չի հասել: Ի. Ենիկոլոպովը գրում է. «.... Մինչև այժմ հայտնի էր, որ ...Բուրցովն է գեներալ Պասկևիչին ներկայացրել «Նախագծի» մասին իր «Կարծիքը», բայց ո՛չ «Կարծիքի» տեքստը, որից կարելի էր դատել «Նախագծի» վերաբերյալ Բուրցովի հայացքների մասին, ո՛չ էլ «Նախագիծը» հայտնաբերված չէին, և միայն վերջերս այդ բացթողումը լրացվեց...»[32]: Եթե հաշվի առնենք, որ Մ. Ժուկովսկու դիտողությունները Օ. Մարկովան հրապարակել է 1951 թ., ապա կարող ենք ասել, որ Ի. Ենիկոլոպովի այս պնդումը համոզիչ չէ, որովհետև նա չի նշում, թե ո՞ր արխիվից և որտեղ են հրապարակվել Ի. Բուրցովի դիտողությունները: Ի. Բուրցովի մեկնաբանություններով, «Նախագծի» տեքստի գոյության մասին մեզ հայտնի խորհրդային գրիբոյեդովագետներից ոչ մեկը չի հիշատակում: Բացառվում է նաև այն, որ Ի. Ենիկոլոպովը կարող էր արդեն հայտնի փաստաթղթերը (Ա. Մալշինսկու և Մ. Ժուկովսկու) շփոթել իրար հետ: Ահա թե ինչ է գրում Ի. Ենիկոլոպովը. «.... Ա. Մալշինսկին օգտվել է «Դիտողությունների» տեքստից, որն արխիվում «Դիտողություններ հողագործական, մանուֆակտուրային և առևտրային ընկերություն հիմնելու մասին» վերնագրով վերջերս հայտնաբերել է Ա. Իոսելիանին: .... Օ. Պ. Մարկովայի հետազոտությունների շնորհիվ հաջողվեց պարզել, թե ով է «Դիտողությունների» հեղինակը. դա Առանձին կովկասյան կորպուսի գեներալ-ինտենդանտ Մ. Ս. Ժուկովսկին էր...»[33]:

«Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» վերաբերյալ խորհրդային պատմագրության մեկնաբանությունները կարելի է բաժանել երկու փուլի. առաջինը մինչև 1951 թ. և մյուսը՝ դրանից հետո ընկած ժամանակաշրջանը, երբ Օ. Մարկովան հրապարակեց Մ. Ժուկովսկու «Գրությունը»:

Քանի դեռ Ա. Մալշինսկու հրապարակած նյութերը վերագրվում էին Ի. Բուրցովին, խորհրդային մասնագետները շատ զգույշ էին արտահայտվում «Նախագծի» մասին դրական կարծիք հայտնելիս: 1947 թ. Վ. Պաշուտոն Ա. Գրիբոյեդովի նախագիծը համարում է «առաջադիմական-բուրժուական ուղղվածության ռուսական տնտեսագիտական մտքի ականավոր նվաճում»[34], չնայած դրանից շատ առաջ՝ 1934 թ., Ն. Պիկսանովը «Նախագծի» մասին խոսելիս Ա. Գրիբոյեդովին համարում է «անիրագործելի ծրագրեր կազմող ընչաքաղց, արագ և շուտ հարստանալ երազող, իմպերիալիստ-նվաճող, Ի. Պասկևիչին՝ նոր նվաճումների գայթակղող (օրինակ՝ Բաթումը նվաճելը - Ս. Վ.), պլանտատոր, որ ձգտում էր մա-

---

[31] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 333:

[32] **Ениколопов И.,** *Грибоедов и Восток, с. 151.*

[33] Նույն տեղում, էջ 153:

[34] **Пашуто В. Т.,** Дипломатическая деятельность А. С. Грибоедова (Исторические записки, т. 24, М.-Л., 1947, с. 135).

լարիաշատ պլանտացիաներում աշխատեցնելով՝ ստրկացնել ռուս գնված ճորտերին և հայ վերաբնակիչներին»[35]:

Ամեն ինչ փոխվեց, երբ Օ. Մարկովայի հրապարակումից հետո պարզվեց, որ Ի. Բուրցովին վերագրվող քննադատությունները պատկանում են Մ. Ժուկովսկուն: Խորհրդային պատմագրության մեջ ամեն ինչ իր տեղն ընկավ. չէ՞ որ դեկաբրիստ Ի. Բուրցովը, համաձայն դասակարգային մոտեցման և խորհրդային գաղափարախոսության, չէր կարող քննադատել «դեկաբրիստ» կամ նրանց համակրող Ա. Գրիբոյեդովի կազմած տնտեսական «Նախագիծը»: Պետք էր, և ցույց տրվեց, որ ցարիզմի պաշտպան և ճորտատիրական կարգերի կողմնակից Մ. Ժուկովսկին կարող էր քննադատել «Նախագիծը»: Ի դեպ, Մ. Ժուկովսկին ներկայացնում է նաև Ի. Բուրցովի բացասական կարծիքը նախագծի վերաբերյալ: Ի. Ենիկոլոպովը գրում է. «...Բուրցովի կարծիքն ընդհանուր առմամբ վկայում է «Նախագծի» հանդեպ նրա բարյացակամ վերաբերմունքի մասին. այն հիմնված է այնպիսի սկզբունքների վրա, որոնցով առաջնորդվում էին «Գաղտնի ընկերության» (դեկաբրիստների – Ս. Վ.) անդամները, այսինքն՝ գյուղացիների ստրկության դեմ պայքար, պետության մեջ օտարերկրյա ազդեցությունների վերացում...»[36]: Սա մտորումների տեղիք է տալիս և ակնհայտորեն հակասում է Ի. Բուրցովի «Կարծիքի» մասին Մ. Ժուկովսկու վկայությանը: Մ. Ժուկովսկին գրում է. «....քննության առնելով («Նախագիծը» - Ս. Վ.)՝ գնդապետ Բուրցովը տվեց անվճռական կարծիք. սարսափեց այդքան մեծ ձեռնարկության միջոցների անհամապատասխանությունից, որոնք անբարենպաստ հետևանքներ կունենային Ընկերության համար...»: Դատելով վերը նշվածից՝ կարծում ենք, որ թե՛ Մ. Ժուկովսկին և թե՛ Ի. Բուրցովը «Նախագծին» բացասական գնահատական են տվել[37]: Մինչդեռ խորհրդային որոշ պատմաբաններ Ի. Բուրցովի չհայտնաբերված, բայց Մ. Ժուկովսկու կողմից միջնորդավորված՝ ներկայացվող «Կարծիքը» փորձում են շինծու կերպով ներկայացնել դրական լույսի տակ, քանզի քաղաքական պատվերը դա էր պահանջում:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

- «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծը», «Կանոնադրությունը» և «Գրությունը» մեզ հասել են ոչ ամբողջական, ուրիշների մեկնաբանություններով և դիտողություններով, ինչը խորհրդային գրիբոյեդովագետներին չպետք է հիմք տար «լիարժեք» տեսակետներ հայտնել հարցի առնչությամբ: Նրանց մեկնաբանությունները հաճախ իրարամերժ են և միակողմանի:

- Դատելով վկայություններից՝ «Ընկերության կանոնադրությունը», դրան կից «Գրությունը» և «Ներածությունը» գրվել են Թիֆլիսում, իսկ Սանկտ-Պետերբուրգում տեղի են ունեցել միայն բանավոր զրույցներ և տեսակետների ճշտում: Միանշանակ ժխտվում, բայց չի լուսաբանվում, թե

---

[35] **Пиксанов Н. К.,** *Грибоедов – исследования и характеристики, Л., 1934, с. 148.*

[36] **Ениколопов И.,** *Грибоедов и Восток, с. 151.*

[37] **Маркова О. П.,** նշվ. աշխ., էջ 389:

Ն. Մուրավյով-Կարսկին ինչի հիման վրա էր պնդում Սանկտ-Պետերբուրգում «Նախագծի» ստեղծման օգտին:

- Ծանոթանալով Կովկասում Ա. Գրիբոյեդովի ապրած ակնհայտ ձանձրույթի մասին բազմաթիվ վկայություններին[38], կարծում ենք՝ եթե նա իրոք տնտեսագետ էր, ապա ժամանակ կգտներ և կկարողանար այդ ուսումնասիրություններն ինքնուրույն կատարել: Պարզ է, որ նա Ֆ. Բուլգարինից այդ ուսումնասիրությունները խնդրում էր դրանց նմանությամբ նոր նախագիծ «արտանկարելու» համար: Բանն այն է, որ Ֆ. Բուլգարինին ուղղված նամակը համընկնում է «երմոլովյան» ժամանակաշրջանին, ուստի անկասկած է, որ սկզբում նա կատարում էր Ա. Երմոլովի, ապա նրան փոխարինած Ի. Պասկևիչի հանձնարարությունները:

- Անտեսելով Ի. Պասկևիչի, նրանից առաջ էլ Ա. Երմոլովի դերն Անդրկովկասի վերակազմավորման և տնտեսական զարգացման գործում՝ խորհրդային պատմաբանները նպատակային կերպով փորձում են վերհանել Ա. Գրիբոյեդովի տնտեսական «տաղանդն ու կարողությունները» և, շրջանցելով կամ ծաղկաքաղի մեթոդով օգտագործելով պատմական փաստերն ու վկայությունները, հանգում են միակողմանի եզրահանգումների: Բազմիցս մեջ բերելով Ա. Գրիբոյեդովի նամակները կամ զեկուցագրերը՝ խորհրդային գրիբոյեդովագետները չեն մեկնաբանում այն ակամա խոստովանությունը, որով Ա. Գրիբոյեդովը Ի. Պասկևիչին հիշեցնում էր Կովկասի բարեկարգման գործում նրա տնտեսական առաջարկությունների մասին, ինչպես նաև այն, որ Ի. Պասկևիչն էր իրեն հանձնարարել այդ ամենը «թռուցիկ հանձնել թղթին»: Ի. Ենիկոլոպովի այն պնդումը, թե Ի. Պասկևիչին ուղղված՝ Ա. Գրիբոյեդովի նամակի տողերը «մարտավարական բնույթ» էին կրում և Կովկասյան կորպուսի հրամանատարի «զգուշավորությունը բթացնելու նպատակ էին հետապնդում», ենթադրական են, ոչնչով հիմնավորված չեն, ուստի համոզիչ չեն: Ճարպիկ բանսարկու Ի. Պասկևիչը կեղծիքի համար անպատճառ կհանդիմաներ և կպատժեր Ա. Գրիբոյեդովին, եթե վերջինս իր նամակի մեջ նրան «հիշեցներ» չեղած բաների մասին: Շրջանցվել է այն փաստը, որ Ա. Երմոլովի հանձնարարությամբ Ա. Գրիբոյեդովի ակամա տնտեսական գործունեությունը սկսվում է 1827 թ. և ակտիվանում 1828 թ. ամռանը՝ Ի. Պասկևիչի օրոք: «Նախագծի» երևան գալը միանշանակ կապված է Ի. Պասկևիչի հանձնարարականների հետ և վկայում է նրա՝ եթե ոչ անմիջական, ապա, անկասկած, գաղափարական մասնակցության մասին: Չի բացառվում, որ Ի. Պասկևիչն այս բնագավառում ևս ձգտում էր փառքի դափնիներ նվաճել և նսեմացնել իր ախոյան Ա. Երմոլովի ծառայությունները:

- Ունենալով Շոպենի, Զուբարևի և այլոց տրամադրած նյութերը և ուսումնասիրությունները, Ա. Երմոլովի, ապա Ի. Պասկևիչի հետաքրքրություններն ու հանձնարարականները՝ «լեզվաբան, իրավագետ և բնագետ» Ա. Գրիբոյեդովի համար դժվար չէր կազմել «Նախագիծ», ինչի մասին վրկայում է Ն. Մուրավյով-Կարսկին: Կարծում ենք, որ բացառապես Ա. Գրի-

---

[38] **Սիմոնյան Վ.,** Ա. Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ..., էջ 187 (տե՛ս 18-24 հղումները):

բոյեդովին վերագրվող «Նախագիծը» լուրջ տնտեսական տեսք է ստացել Ա. Երմոլովի, ապա Ի. Պասկևիչի հանձնարարականների և «ֆինանսիստ ու փորձ ունեցող» Պ. Զավիլեյսկու հետ համագործակցության շնորհիվ:

- Ն. Մուրավյով-Կարսկու կողմից «Նախագիծը» կազմելու գործում Պ. Զավիլեյսկու խաղացած դերի թերագնահատման քննադատության հարցում որոշ չափով համաձայնելով խորհրդային պատմագրության կարծիքներին՝ միաժամանակ կարծում ենք, որ նրա դերը խորհրդային գրիբոյեդովագետների նշած չափից շատ ավելին է եղել: Կարծում ենք՝ Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին «Նախագծի» համահեղինակներ են եղել, և վերջինիս վերագրված «գրագրի», ինչպես նաև «երկրորդական» դերն արդարացի չէ:

- Պ. Զավիլեյսկու և Ա. Գրիբոյեդովի «Նախաձեռնությունները» ընդհանրացնելու և սերտ առնչությունների հարցում ժխտողական դիրք է բռնում հատկապես Օ. Մարկովան, սակայն նրա մեկնաբանությունները համոզիչ չեն, որովհետև Պ. Զավիլեյսկու «Անդրկովկասյան առևտրային դեպո» ֆիրմայի նպատակների և բնույթի մասին ոչ մի հեղինակ մանրակրկիտ համեմատություն չի արել: «Առևտրային դեպոյի» և «Ռուս-անդրկովկասյան ընկերության» նախագծի առևտրային դրույթները համարյա համահունչ են: Դա է ցույց տալիս «Նախագծի» ուսումնասիրությունը:

- «Ռուս-անդրկովկասյան ընկերության նախագծի» վերաբերյալ կարծիքներն ու դիտողությունները Ի. Բուրցովին կամ Մ. Ժուկովսկուն վերագրելու, հետևաբար դրանց դրական կամ բացասական լինելու հարցում խորհրդային գրիբոյեդովագետների տեսակետները ավարտուն չեն, հակասում են մեկմեկու, քանզի Ի. Բուրցովի «Կարծիքի» տեքստը հայտնաբերված չէ: Այն, որ «Կարծիքը» հայտնվել է Ի. Պասկևիչի կամ «Նախագծի» հեղինակների հանձնարարությամբ, էական չէ: Մի բան հստակ է. Ի. Բուրցովի անունն այս հարցի առնչությամբ հենց այնպես չէր շրջանառվի: Չի բացառվում, որ Ի. Բուրցովի պարագան հենց այն «ծայրահեղ դեպքն էր», երբ Ի. Պասկևիչին իրո՛ք հարկավոր է եղել հաշվի առնել նաև դեկաբրիստ Ի. Բուրցովի կարծիքը: Դատելով Ի. Բուրցովի «սարսափած և անվճռական» կարծիքի մասին Մ. Ժուկովսկու վկայությունից՝ կարծում ենք, որ թե՛ Մ. Ժուկովսկին և թե՛ Ի. Բուրցովը «Նախագիծը» բացասաբար են գնահատել: «Նախագիծը», մինչդեռ խորհրդային որոշ պատմաբաններ Ի. Բուրցովի՝ չհայտնաբերված, բայց Մ. Ժուկովսկու կողմից միջնորդավորված կերպով ներկայացվող «Կարծիքը», փորձում են հրամցնել դրական լույսի տակ, քանզի քաղաքական պատվերը դա էր պահանջում:

Այսպիսով, չնսեմացնելով Ա. Գրիբոյեդովի անուրանալի ծառայությունները, դիվանագիտական, իրավագիտական, տնտեսական աներկբա կարողությունները՝ փորձեցինք ժամանակի գաղափարախոսության հրամայականից պարտադրված ոչ ճշմարիտ մեկնաբանությունները լուսաբանել պատմական արդարության դիրքերից:

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ "ПРОЕКТА УЧРЕЖДЕНИЯ РОССИЙСКО-ЗАКАВКАЗСКОЙ КОМПАНИИ" 1828 г.

СИМОНЯН В. Р.

Резюме

В советской историографии "Проект учреждения Российско-Закавказской компании" А. С. Грибоедова был представлен в качестве "шедевра" экономической мысли, при этом авторство данного проекта было приписано А. Грибоедову. Советские историографы обошли вниманием степень участия П. Д. Завилейского и И. Ф. Паскевича в составлении проекта. Последующая деятельность П. Д. Завилейского также не стала предметом изучения специалистов.

Всестороннее исследование рассматриваемой проблемы приводит к заключению, что в составлении проекта большую роль сыграли именно П. Д. Завилейский при участии А. П. Ермолова, И. Ф. Паскевича.

В связи с проектом в свое время выступали И. Г. Бурцов и М. С. Жуковский, однако, по мнению Жуковского, отзыв Бурцова был неодобрительным.